ԻՆՉՊԵ՞Ս ՍՏԱՆԱԼ ԱՍՏԾՈ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Լսո՞ւմ Ես Ինձ Հիմա

Մաս 3

«Իմ պահպանության տեղը կանգնեմ, և կենամ պարսպի վրա, և մտիկ տամ տեսնեմ թե ի՞նչ է խոսելու ինձ հետ. և ի՞նչ պիտի պատասխանեմ իմ հանդիմանության մասին: Եվ Տերը ինձ պատասխան տվավ և ասեց. Գրիր տեսիլքը և որոշ նշանակիր տախտակների վրա, որպեսզի վազի նրան կարդացողը:» Ամբակում 2:1-2

1- Ուզիր: Ես պետք է փափագեմ Աստծո կամքին հնազանդել

«Թող լսեմ թե ինչ կխոսի Տեր Աստվածը...» Սաղմոս 85:8

«Քո կամքը կատարել կամեցա, ով Աստվածս.» Սաղմոս 40:8

«Իմ անձը մաշված է ամեն ժամանակ՝ ցանկանալով քո իրավունքներին:» Սաղմոս 119:20

«Քո Եհովա Աստծուն կգտնես, եթե բոլոր սրտովդ և բոլոր հոգիովդ նրան խնդրես:» Երկրորդ Օրինաց 4:29

2- Առանձնացիր: Գտնել խաղաղ մի վայր ու առանձնանալ

«Իմ պահպանության տեղը կանգնեմ...» Ամբակում 2:1

«Իսկ նա (Հիսուս) քաշվում էր անապատ տեղերանք, և աղոթք էր անում:» Ղուկաս 5:16

«Մտիր քո սենյակը և դուռդ փակած աղոթք արա դեպի քո Հայրը, որ ծածուկումն է. և քո Հայրն՝ որ ծածուկ տեղը տեսնում է, հայտնապես կհատուցանի քեզ:» Մատթեոս 6:6

Հիշիր որ Աստված հոգում է

«Հոգս մի արեք ասելով, թե՝ Ի՞նչ պիտի ուտենք...կամ խմենք...կամ հագնենք...ձեր երկնավոր Հայրը գիտի որ այդ ամենը պետք է ձեզ:» Մատթեոս 6:31-32

3- Սպասիր: Հանդարտեցնել մտքերս ու զգացմունքներս

«...կենամ...» Ամբակում 2:1

«Դադարեցեք և ճանաչեցեք, որ ես եմ Աստված.» Սաղմոս 46:10

- Սպասել հանդարտությամբ

«Ով իմ անձը, մենակ լուռ մտիկ տուր Աստծուն. որովհետև նրանից է իմ հույսը:» Սաղմոս 62:5

- Սպասել համբերությամբ

«Համբերիր Տիրոջը և սպասիր նրան.» Սաղմոս 37:7

- Սպասել ակնկալությամբ

«Ես սպասում եմ Տիրոջը, իմ անձը սպասում է, և ես նրա խոսքին եմ հուսացած:» Սաղմոս 130:5

4- Նայիր- Թույլ տալ, որ Աստված տա մտավոր պատկերը

«Մտիկ տամ տեսնեմ թե ի՞նչ է խոսելու ինձ հետ...» Ամբակում 2:1

«Ես մտիկ արի որ իմանամ այս. սակայն դժվար էր իմ աչքերի առաջին. մինչև որ Աստծո սրբության տեղը մտա և նրանց վերջն իմացա:» Սաղմոս 73:16-17

Աստծուն կոնկրետ հարց տուր

«Եթե մեկը ձեզանից իմաստության պակասություն ունի թող խնդրի Աստվածանից, որ ամենին տալիս է առատությամբ և չի նախատում, և կտրվի նրան: Միայն թե թող հավատքով խնդրի առանց երկմտելու...» Հակոբոս 1:5-6

Փնտրիր Աստծո խոսքի մեջ

«Բաց արա իմ աչքերը, որ քո օրենքի հրաշքները տեսնեմ:» Սաղմոս 119:18

5- Գրիր- Արձանագրիր այն ինչ որ ստանում ես

«Եվ Տերը ինձ պատասխան տվավ և ասեց. Գրիր տեսիլքը...» Ամբակում 2:2

«Սա պիտի գրվի եկող ազգի համար. և ստեղծվելու ժողովուրդը Տիրոջը կգովի:» Սաղմոս 102:18

6- Պաշտիր- Շնորհակալություն հայտնիր Աստծուն հետդ խոսելու համար

«Ով Տեր լսել եմ քո լուրը և վախեցել...» Ամբակում 3:2

Հաջորդ Կիրակի

ԻՆՉՊԵ՞Ս ՃԱՆԱՉԵԼ ԱՍՏԾՈ ՁԱՅՆԸ

Հովիվ Սարօ Խաչիկեան